



ՀԱՅԲԱՆՔԻ

ԱՐԱՐԱՆԻ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 141

4 ԱՊՐԻԼ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԵՒ

ՏՕՆԱՑՈՅՑ

Ապրիլ	5	†	Կիր. ակ.	Ծաղկազարդ
	6		Քչ. քձ.	Աւագ երկուշաբթի
	7		Դշ. քկ.	Աւագ երեքշաբթի
	8		Դշ. զձ.	Աւագ չորեքշաբթի
	9		Վշ. զկ.	Աւագ հինգշաբթի: Ոսկուայ:
	10		Ուր. դձ.	Աւագ ուրբաթ:
	11		Շք. ղկ.	Աւագ շաբաթ: Ճրագալոյց Սրբոյ Զատիկի:

ԿԱՐԵԻՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկար ժամանակէ ի վեր պէսքն զգացուած է Ս. Գրոց բնօր քարզմանութեան մը Հայերէն աշխարհաբար եւ Թուրքերէն լեզուներու: Այժմ Վեր. Յիսուսեան Հարց ջանիւք սոյն պէսքին զոնացում տրուած է մասամբ: Արդի զիտուններու հետ ազատութեամբ նոխացած բնագիրներու վրայի քարզմանած են յիշեալ Հարց Հայերէն աշխարհաբարի եւ Թուրքերէնի՝ չորս Աւետարաններն ու Առաքելոց Գործքերը, ուղղելով գրչագիրներու սխալներն ու անհրաժեշտութիւնները, եւ մօրն ու դժուարիմաց խօսքերուն համար աւելցնելով համառօտ, զիւրիմաց եւ կարեւոր ծանօթութիւններ:

Հաւ քուղք եւ մահուր տալագրութիւն:

ԳԻՆ. Կազմեալ 12 դահեկան, թղթակազմ 8 դահեկան, մեն մի տետր քարզօնակազմ 3 դահեկան:

Կը գտնուի՝ Բերա, Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց (Պայրամ փողոց), եւ Վեր. Յիսուսեան Հարց քով, եւ Պոլիս Պայեմց եւ Եազրնեան գրավանդառներու քով, եւ Հայաստանի գաւառաց մեջ, նմանապէս Վեր. Յիսուսեան Հարց վանդօքը, (Պէյրուք, Ասանա, Կեսարիա, Սեբասիա, Եւդոկիա, Ամասիա եւ Մարզուան):



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՌԱՐԱԹ-ԱՐԹ-ԵՐԹ-

Չորրորդ տարի ④ 4 Ապրիլ 1914 ④ Թիւ 141

«Մրբազան Բանաստեղծական Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց առիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն արագիւն կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մերի տէր Կաթի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1913, ընդ 60780 բռնամատար:

ԴԵՊՈՒՆ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՅԻՍՈՒՍ ԱՆՅԱՆԷ

Ու երբ երիտիկն եղան, Անոր ետե-
ւէն զացին թագաւորս ժողովուրդներ:
Ու ահա երկու կոյրեր կը նստին ճամ-
բուն քով. երբ յետցին քի Յիսուս
կ'անցնի, աղաղակեցին ու կ'ըսեն.
«Ողորմէ՛ մեզի, ո՛վ Դաւթի որդին»:
Ու ամբողջ յանդիմանեց զիրեն՝ որ-
պէս զի լսեն. ու անոնք ա՛յ աւելի
կ'աղաղակին ու կ'ըսեն. «Ո՛վ Տէր,
ողորմէ՛ մեզի, ո՛վ Դաւթի որդին»: Կե-
ցաւ Յիսուս, կանկեց (զանկն) ու ը-
սաւ. «Ի՞նչ կ'ուզէ՛ք որ ընեմ մեզի»:
Կ'ըսեն անոր. «Ո՛վ Տէր, (կ'ուզենք) որ
մեր սիսերը թաղուին»: Ու գրաւով Յի-
սուս, յօտեցաւ անոնց աշխուժ, ու
շուտով ծեւան, ու զացին անոր ետեւէն:

(Մատթ. Ի. 23—34)

Այս զարմանալի հրաշքը գործեց Տէրն
Մեր՝ Մաղկազարդի օրը ովստանաներով երու-
սաղէմ մասնէն անմիջապէս առաջ (Հմմ.
Մատթ. Ի. 34, Իա, 1.)։ Իր ներփակած
թաքուն երկնաւոր խորհրդոց և այս նուի-
րական օրերուն ի յարգանս՝ արժանի է որ
փոքր ի շատէ նկատենք զայն։

Փրկիչը, որ եկած էր բարի լուրը աւե-
տարանելու, երեսուն տարի առանձնացած
պատրաստուելէն վերջը, հրապարակաւ
քարոզութեան մէջ երեք տարի անցուց,
չարչարուելէն առաջ, երեք տարի ամբողջո-
վին անհանգիստ կեանք. անդադար կը քալէր,
ցուրտին՝ տաքին, գիշեր՝ ցերեկ քրանելով
ու յոգնելով կը վազէր մոլորեալ ոչխարին
ետեւէն, ամբողջ օրը բարեբարելով, քարո-
զելով, ամբողջ գիշերն հսկելով «Հանելուկ
յաղօթսն Աստուծոյ»։ Գլուխը դնելիք տեղ,
և ուտելիք հաց չունէր, իր աշակերտներն՝

անթեցած ատենին, մինչև իսկ դաշտերում
մէջ «Հասկեր կը կորգէին ու կ'ուսէին»:

Եւ Իսրայէլ հրաժարուած մը ունեցած
էր. բնաւ այսպիսի մարգարէի մը ոտքերը
կոխած չէին Հրէաստանի օրհնեալ հողին վը-
րայ: Իտրերէ ի վեր սպասուած Մեսիան էր
Ան, տենչանօք սպասուած՝ ստորանկեալ,
տառապող, խեղճ ու կորսուած, խաւարի
մէջ խարխափող, երկնաւոր լուսոյն կուրցած
կուսպաշտ մարդիկներէ. սպասուած՝ զիրար
բզկատող, ամբարիշտ, անբարոյ, անաստուած
մարդիկներէ, որոնք պիղծ հեղեղներու թա-
փով թաւալգլոր ի դժոխս կը չքմէին:

Այս Մեսիային, այս քարոզուած Աստ-
ուածորդուն ետեւէն ահագին բազմութիւն-
ներ կը քալէին անխոնջ, այս մեծ հրաշա-
լիքէն դիւրեւած, փրկագործութեան աղըն-
կալու:

Աստուածային վսեմ ճոխութեամբ պերճ
կը քալէր Փրկիչը, գեղահասակ ու գեղատե-
սիլ, քաղցրաչուի և քաղցրախօս. սիրող և
առաքինութեան ճառագայթներով կ'արծար-
ծէր կը մագնիսացնէր այդ ժողովուրդը, ան-
բաժան իրեն կը կապէր: Իշխանական շեշ-
տերով կը հրամայէր տկարութեան ու մա-
հու, բռնութեան հողմոց ու դժոխքի, և կը
հնազանդէին իրեն: Անհունապէս բարի էր,
ազնիւ, քաղցր, զթած, բարեկրօն. որչափ
աւելի խեղճ էր մէկն ու մեղաւոր, այնքան
աւելի ընդարձակող և գորովագութ սիրտ և
փարեղութիւն կը գտնէր Յիսուսի քով: Նա
բռնալիւր կը ցանէր բարիքը: Անմեղ էր նա
և ամենասուրբ. հիանալի բարոյական, երկ-
նաւոր կատարելութիւն կը քարոզէր: Երկ-
նաւոր Իմաստութիւն էր նա, Իան Հօր,
Աստուած ճշմարիտ, Լոյս ի Լուսոյ ի Հօրէ:
Անոր ձեռքերը ստեղծած էին այս գեղեցիկ
տիեզերքը. համրած էր հիւլէները և կշռած
անոնց անբաւ բազաղորդութիւնները. ամենա-
հզօր Ստեղծիչ էր Ան:

Կ'անցնէր Յիսուս այն ճամբէն, որու քով
կը նստէին երկու կոյրերը: Ի՞նչ բախտ...
կեանքի մէջ մէկ անգամ միայն հանդիպելիք
բախտ. եթէ այս առիթը փախչի, յաւիտե-
ան կորսուած է այլեւս: Ի՛հ, ո՛րպիսի ի-

մաստութիւն է գիտնալ առիթին յարգը.
«Ո՛հ թէ գիտնայիր դու՝ Ասուծոյ քեզի ըրած
այդ պարգեւը եւ թէ ո՛վ է որ կը խօսի քե-
զի»... Մանաւանդ թէ այդ բարերար հովիւը՝
ինքը մասնաւորապէս կ'անցնի. ի յաւիտե-
նից պատրաստած է այս առիթը. «Ահա՛
դրանք առջեւ կեցած կը բախեմ, բա՛ց ինձի»:
Պետրոսին կը նայի քաղցր, և նա անհասուն՝
արցունքներ կը թափէ. Յուդային կը նայի,
կը խօսի, կը համբուրէ, և նա անզկուշ կը
մեռնի: Անցաւ Անիկայ մուրէն մինչև ց՛ող-
գոթա, անդադար քաղցր մեղի համար, մեր
ճամբէն, մեր ետեւէն: «Ճամբորդեց մարդ-
կային կեանքի ամեն ցաւերուն մէջէն»: Ամէն
օր մեր սիրտը տեսակ տեսակ ազդեցութիւն-
ներով, առիթներով կ'այցելէ, կ'այցելէ ի-
րական ներկայութեամբ, քահանայի մը խօս-
քին հնազանդելով՝ կը մանէ մեր սրտին մէջ,
հոն կը մնայ՝ շնորհաց զանձեր թափելով:
«Ի՛հ, թէ գիտնայիր քու այցելութեան ժամը»:
«Ահա՛ ընդունելի ժամանակը, ահա՛ փրկու-
թեան օրը»: Կ'անցնի Յիսուս. չփախցնենք
առիթը. հնար է մէյ մըն ալ յաւիտեան չենք
կրնար ձեռք ձգել, ու... կը կորսուինք:

Տե՛ս, ի՞նչ փառապանծ կու գայ երկնա-
ւոր այս Թագաւորը. ո՛րպիսի հեռեւորներ,
ինչ ամբոխ. ամէն տեսակը կայ. ամէն հա-
սակէ, ամէն դասակարգէ. սիրազեղ ամբոխ:
Նա ո՛չ զոք կը քամահրէ. «Ողջեցու համար
բժեկի պէտք չկայ, այլ հիւանդներու համար»:
Տե՛ս ի՞նչ ամբոխ, այս շքեղաշուք Թագաւո-
րին ետեւէն. անթիւ անհամար ամբոխ, նա-
հապասներու, Մարգարէներու, Առաքեալնե-
րու, Հայրապետներու, Մարտիրոսներու,
Ճգնաւորներու, Կոյսերու, Սուրբերու. տե՛ս,
ինչ անձնուրացութիւն, որպիսի՝ կոխ բռնու-
թեան և սատանայի հետ, ի՞նչ ապաշխարու-
թիւն, մահացուցումներ, արցունք, արիւն,
խաչ... ի՞նչ կ'ըսէ սիրտդ... քա՛ջ եղիր.
խառնուէ՛ այս ամբոխին. տե՛ս, քիչ վերջը,
այս խեղճ կեանքին վայրկեանէն վերջը՝ ի՞նչ
յալթութիւն, որպիսի պսակ, փառք, լոյս,
երջանկութիւն յաւիտեանական... խառնուէ՛
այս օրհնեալ ամբոխին, քալէ՛ Յիսուսի ե-
տեւէն, առ ոտն կոխէ՛ առժամայ սպանիչ

հեշտութիւնը, զորէ՛ վայրկեանական հանգիստը, գրկէ՛ սիրով նեղութիւնն ու մահացուցումը. ապաշխարէ՛. և Դողդիթայէն պիտի առնի ի Թարթը, և պիտի խառնուի հրեշտակաց ու Սրբոց գունդերուն, երգելու համար յաւիտեանական Ալեւուն: Ի՞նչ փառաւոր ամբոխ:

Ա՛վ թշուառ կոյրեր, որ ճամբու քով նստած են մուրալու. երկու կոյրեր, որ լոյս չունին: Առանց Յիսուսի՝ մեր հոգին խաւարեալ է և մեր մարմինը խաւարեալ: Մեր հոգին մեղքով կուրցաւ. թոշուն էր երկնաշու. թեւերը կտարեցան, միտքը բխացաւ, յիշողութիւնն ազգականեցաւ, երեւակայութիւնը պղծուեցաւ. շար սովորութեան մէջ նստեցանք ճամբու վրայ, փոխանակ արտորանօք քաշելու, փոխանակ թռչելու Յիսուսի ետեւէն. պատուած զգեստներով, մուրացիկ նստեցա՛ք, աղքատ ամէն առաքինութեան: Այս կոյրերուն գոնէ ականջներն առողջ էին ու «Լանցին քի Յիսուս կ'անցնի»... վա՛յ անոնց որ աչքերսին կը խփեն, ականջսին կը գոցեն...: Ի՛նչ երբ «Լանցին քի Յիսուս կ'անցնի», մէկէն սկսան աղաղակելու. տե՛ս ի՞նչ հաւատք. չեն տեսներ ու կը հաւատան. «Յեանի՛ անոնց որ չեսեսելով կը հաւատան Յիսուսը»: «Զոր չեսես ու սրեցիք. զոր հիսա չկարեալով նեւարել, բայց հաւատացիք»: Կոյրեր են, բայց օդին մէջէն սարսուռով կը զգան այդ Բարերարը, կը զգան որ ԿԱՅ. իրենց գոյութենէն, թշուառութենէն, անհունի փափաքէն, կը զգան որ կայ, ու կ'աղաղակեն, վստա՛հ որ կը լսէ բարի Աքարիչ ու Փրկիչը:

Ի՛նչ սկսան աղաղակել: Պէտք էր լսել տալ Յիսուսի, իրենց թշուառի ձայներն Ասոր ականջներուն հասցնել: Ողորմութիւն կը հայցեն. Ասոր Սիրտը պիտի է, պիտի լսեն կը պաղատին. Ասիկա Դաւթի որդի է, մեր ցեղէն, մեր ազգէն, մեզ նման խոտարձ և ունայնացեալ, որ եկած է կոչելու մեղաւորները, աշխատեալներն ու բռնաւորները: Ասիկա Մարիամ կոյսին զաւակն է, ամբողջ բարութիւն, համակ խանդաղատանք. Ողորմէ՛ մեզի, ողորմէ՛ մեզի...:

Եւ բարեպաշտ ամբոխը, իբրեւ թէ Յիսուսի պատուոյն նախանձախնդիր, սաստեց յանդիմանեց կոյրերը, արգիլել ուզեց զանոնք աղաղակելէն, պիտի լսեն հայցելէն, արգիլել ուզեց զանոնք Յիսուսէն: Առաքեալներն իսկ այս սխալ ըմբռնումով մանուկները կ'ուզէին վտարել Յիսուսէ: Կա՛յ սակայն ուրիշ ամբոխ մը, այո՛, կայ ամբոխ մը՝ անիրաւ և մեղ թշնամի, որ կ'ուզէ խեղդել մեր թախանձագին ձայնը, որ կ'ուզէ մեռցնել մեր իղձերը, որ կ'ուզէ ճշմարտապէս հեռացնել զմեզ Յիսուսէ. կիրքերու ամբոխը, զարհուրելի. հազարումէկ չնչին պատճառներով, երիտասարդութեան, պատուոյ, վայելքի, կ'ուզէ զմեզ մեղքի մէջ ձգել և գերի պահել. և աշխարհա՛ որ ի չարիւն կայ, իսկոյն կը միանայ մեր կրքերուն, ցուցադրելով իր հոգեհալած պերճանքն ու հեշտութիւնները, կը միանայ անոնց սատանայ, առիւծի պէս մոնչելով, մեր միտքը չարաշուք մուխով, պիղծ երեւակայութիւններով պատելով. անոնց պիղծ ամբոխը կը սաստեն մեզի. փորձութեան սոսկալի տագնապներուն մէջ կ'ուզեն լռեցնել մեր աղաղակներն առ Յիսուս և առ Մարիամ. անոնց պիղծ ամբոխը կը ծաղրեն Կրօնքը ու Եկեղեցին. հերձուածի և անհաւատութեան որոմը կը ցանեն, չար օրինակներով կը ջլատեն... ո՛հ, անօրէն ամբոխ... Ի՞նչ ընեն խեղճ կոյրերը...:

Ահա թէ ինչ կ'ընեն անոնք: Անոնք քաջութեամբ կ'արհամարհեն այս ամբոխին սաստեղը. անոնք բան մը միայն կ'ուզեն. անոնք ու փրկուել...: Եւ որովհետեւ կը սաստեց ամբոխը, անոնք «Ա՛յ աւելի կ'աղաղակեն». ետեւէ ետեւ կ'աղաղակեն, անգաղար կ'աղաղակեն. և իրենց աղիողորմ հայցուածը նոր ձեւ մըն ալ կ'առնու. աս անգամ կ'աւելցնեն նաեւ «Տե՛ր» բառը. ո՛վ Յիսուս, զուես Տէր. այս ամբոխը ի՞նչ իրաւունք ունի մեզի իշխելու, հրամայելու. Տէ՛ր, զո՛ւ նուաճէ այս ամբոխը, կոտորէ՛ մեր սովորութեան չգիտները. Տէ՛ր, ողորմէ՛ մեզի: Ա՛յսպէս կ'աղաղակէ ամէն հոգի որ կը բարձրացնէ «Ի՛ խորոց սրտէ խօսք քնդ Աստուծոյ». «Այաղաղակեցի՛ք առ Տէր սրցի մօտ». «Խորհե՛ք

րեն կարդացի քեզի, Տէր. Տէ՛ր լսե՛ իմ ձայնիս», «Ի միտ ա՛ն զաղաղակ իմ»։ «Աղաղակ իմ առ քեզ եկեցցէ»։ «Խոնարհեցո՛, Տէր, զունկն քո եւ լո՛ւր ինձ... ողորմեա՛ ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ... յառնե՛ անխաւէ փրկեա՛ զիս»։ Ա՛յսպէս աղաղակեցին կոյրերը. աներկիւղ, բարձրաձայն, զօրաւոր հաւատքով եւ խոնարհ վրասահութեամբ, անդադար աղաղակեցին խեղճ երկու կոյրերը։

Ու պատահեցաւ սխրալի բան մը։ Կեցաւ Յիսուս։ Հակառակ ամբոխին, լսած էր ուրեմն Յիսուս այս աղետորով աղաղակները։ Ո՛հ, նա ինքն ազգած էր զանոնք. զի «Առանց Յիսուսի բան մը չեմք կրնաւ ընել»։ հաւատքի, աղօթքի, բարի գործոյ սկզբնաւորութիւնն ալ վախճանն ալ իրմէն է։ «Որ սկսաւն ի ձեզ զգործս բարեաց, կատարեցցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիստոսի»։ «Աստուած է որ յաջողե՛ ի ձեզ զկամելն եւ զառնելն»։ Կոյրերը գործակցեցան Յիսուսի շնորհքին. չհակառակեցան այլ ընդունեցին սիրով, համոզուելով որ իրենց բարիքն ու փրկութիւնը Յիսուսէն էր։ Ուստի Յիսուս, ի հեծուկս ամբոխին որ կ'ուզէր արգելուլ, կեցաւ. կեցաւ նա՛, որ յաներեւոյթս հանգիստես է մեր հոգեւոր կոիւնքերուն, չա՛տ մօտէն հանգիստես։ «Ասեղի առ Յիսուս»։ Եւ ստիպուեցաւ ամբոխը լռելու։ Ահա՛ յաղթութեան սկիզբը։ Ա՛յսպէս կը նուաճուի կրքերնուս, փորձող աշխարհի ու սատանայի անխաւ ամբոխը, չար օրինակներու, չար թելադրութիւններու ու համոզումներու, սխալ եւ մոլոր վարդապետութիւններու անօրէն ամբոխը։

Եւ Յիսուս ո՛չ միայն կայնեցաւ, այլ նաեւ կանչեց այն խեղճերը. «Կոչեաց»։ Եւ զիջումը. «Զեկայ, Կ'ըսէր, չեկայ ես կանչելու արդարեւեմ, այլ մեղաւորները»։ Կ'աղաղակէր Յիսուս ալ. «Սկա՛յք առ իս. Սկե՛ք ինձի»։ «Սքե՛ք մեկը ծառուած է, քո՛ղ ինձի գայ ու խմե՛ք»։ Բայց մեր այս անգին բարեբարը, մեր Փրկիչն Յիսուս այս կեանքիս ճամբայէն անցաւ. գնա՛ց բոլորովին. իր ժամանակը միայն լուսաւորեց այս Արեգակը, և ապեր-

ջանի՛կ մնացին ապագայ սերունդներ։ Բարե՛ սքանչելեացս. անցաւ, այո՛, այս կեանքի ճամբէն անցաւ. բայց ճամբուն ծայրը կայնեցաւ, ա՛յնպէս հրաշափառապէս կայնեցաւ, որ անցնող ամէն սերունդներ, մինչեւ ի կատարած աշխարհի, ներկայ պիտի ունենան զինքը, իրապէս, հոգեւով եւ մարմնով, կենդանի Աստուած եւ Տէ՛ր, Ներկայ պիտի ունենան զինքը ամէն տեղ, ամէն քաղաքի եւ զիւղի մէջ, ուր քահանայ մը, ուր մատուռ մը կայ. հո՛ն ներկայ պիտի ունենան զինքը, զիչեր ու ցերեկ, մարդասէր ու զթա՛ծ, փառաւորեալ թագաւոր։ Ահա ա՛յսպէս կայնեցաւ Յիսուս. «Ասեղի առ Յիսուս» մեր մօտը, իր զեղուն, իր անխմանալի, իր աստուածային սիրովն ու ցանկ կը կանչէ զմեզ սիրողաբար՝ «Փութա՛, քանզի այսօր քու ցանդ մեզ պէ՛տ է որ հիւր ըլլամ»։ Եւ Զաքարէոս «Փութացաւ... եւ ընդունեցաւ զանի ուրախութեամբ»։ Եւ ո՛չ միայն կը կանչէ զմեզ, այլ եւ ինքը կ'աճապարէ կու գայ, մեր սրտերուն մէջ կը մանէ, անմահութեան կերակուր. կը միանայ մեզ սիրոյ անպատմելի գիրկընդխառնմաներով, եւ մեր մէջը կը դնէ իր թագաւորական սթո՛ղը. «Ասեղի առ Յիսուս»։ Իր բոլոր հրեշտակներովն ու Սուրբերովը, իր բոլոր շնորհներովն, օգնութիւններովն ու երանութեամբը, իր Հօրը եւ Հոգւոյն հետ կ'օթեաւանի մեր քով. «Ասեղի առ Յիսուս»։ Ո՛վ մեր անպատում երջանկութեան...

Ահա՛ խեղճ կոյրերն, իրենց այն արգահատելի վիճակին մէջ, կ'աճապարեն հեւ ի հեւ եւ գայթ ի գայթ, կու գան Յիսուսի առջեւ անճառելի փափաքներով, բայց վրասահութեամբ. Եւ ի՛նչպէս չվստահէին... Եւ Ամենակարողն Յիսուս Աստուած, ամենուն պարգեւատուն, շնորհ պիտի տայ, բայց ի՛նչ շնորհ, ո՛հ, յապուշ կրթին թո՛ղ արարածք... ի՛նչ որ այս խեղճերը կ'ուզեն. «Ի՛նչ կ'ուզե՛ք որ ընեմ ձեզի»։ Ի՛նչ պիտի ուզէին, խեղճ կոյրերը... «Տէ՛ր կ'ուզեմք որ մեր աչքերը բացուին»։ Ը՛յս կ'ուզենք, Տէ՛ր, ը՛յս, որպէսզի տեսնենք զքեզ, ճանչնանք զքեզ, սիրենք զքեզ։ Առատացաւ գութը

Յիսուսին, զեղաւ արտին խանդաղատանքը. մտեցաւ անոնց աչքերուն, և շուտով տեսան : Տեսան նախ զՅիսուս, երջանկութեան արեւը, երանական այն դէմքը, Հօր Աստուծոյ պատկերը, այն անմահացուցիչ գեղեցկութիւնը : Ո՛վ անսասան վստահութիւն. ո՛վ աներկմիտ աղօթք և խնայրուածք. ո՛վ առատապարգեւ գթած Յիսուս : Տո՛ւր մեզ, ո՛վ Տէր, ա՛յսպէս մօտենալ քեզի ամէն օր Ս. Հաղորդութեան մէջ, տեսնել զքեզ . . . :

Տեսնել զքեզ, եւ այդ խեղճ բժշկեալներուն պէս հաւատարմութեամբ երթալ քու ետեւէդ, թողուլ մեղքը, չար սովորութիւնները, աշխարհքը, մարմինը, սատանային ընկերութիւնը. երթալ քու ետեւէդ, քու հետքերուդ վրայէն, քու օրինակներուդ հետեւելով, երթալ քեզի հետ չարչարանքներու, հաւածումներու, երթալ մինչեւ ցԴողգոթա. որպէս զի մենք ալ, որ քու շնորհքովդ Ամեն բան բողոցիմք ու եկանք բու ետեւէդ, արժանի ըլլանք տեսնել քու Սուրբ Յարութիւնդ ու փառաւորեալ Դէմքդ, եւ ժառանգել յաւիտեանական երջանկութիւնը զոր պատրաստեցիր զքեզ սիրողներուն :

ՊԻՐ ԿԵՆՃ ԳՐԶՐԸ ՏԵՖՈԷՐԻ ԽԱԹԸՐԱԹԸՆՏԱՆ

Պիւր կենն գրգըն հայաքրնըն հեռ կիւնիւ-խաքրեհսնի գայս իքսիյի սեֆթեհեհն իգրիպաս օլըմսրե սր :

1878 Յուլիս 18. — Իշթէ նշանւանտում : Հայաթըմն պէրրագ սէմասը իւզէրինտէքի օքիւչիւք սիյան պուլուլ տա պուլընմամը օլտա իտի, հագիգաթէն պախթիյար օլաճագտում : Նշանլըմ քրիսթիան տէյիլ տիր : Սահիհ տիր քի էյի պիր թէրպիյէ կէօրմիւշ, իլք հաղորդութիւնը տախի ալմը տըր : Փազաթ, մաէթթէէսիւֆ, մէթթէպտէն չըգտըգտան սօնրա արթըգ վէզայիֆի տինիյէսիյէ ամիլ օլմամը տըր :

Պիւթիւն էօմրիւնիւ, պէնիմ հիսսիյաթը տինիյէմէ վէ թէզահիւրաթը վիճտանիյէմէ իշթիրագ էթմէյէճէք օլան պիր քիմսէ իլէ կէչիւմէք ֆիքրի պէնի ատէթա թէվհիլ ի-

տիյօր : Իքիմիլիւն արասընտա տայիմի պիր զըտտիյէթ, միւթէմատի պիր սըզլէթ հասըլ օլուր գօրգուսընտայլմ :

Մա մաֆիյհ, էպէվէյնիմին նասիհաթընը տիյնէմէյէ գարար վէրմիշիմ, չիւնքի օնլար տա հագպը տըրլար : «Քէնտի թարաֆընտան հարաճագ հիշ պիր ֆէտաքեարլըղըն եօգ աըր, տէյօրլար : Նշանլըն հէր տիւրիւ մէգիյէթ-լէրէ մալիք տիր, սէրվէթի, շէրէֆի, մէվգիի, սըհէթի, հիւան ու ճէմալը եէրինտէ պիր էֆէնտի տիր : Էհ, զաթէն հէր վագըթ իշին մուլլագա պիր շէյտէն տէ վագ կէչմէք իճապ էթմէ՞գ մի . . . : Հէմ տէ, նիշին պու գատար ալթ իւսթ օլույօրսուն, պիր չօգ գարըլար գօճալարըն տէօնտիւրէպիլմիշ տիր-լէր, սէն տէ քէնտի գօճանը տէօնտիւրիւրսիւն» :

Էվվէթ, պէն տէ օնը դարձա կէթիւրիւմ իշթէ պէնիմ տէ առաքելութիւնը պու օլուր :

1879 Յունիս 1. — Իշթէ էվլէնտիլիմիլգէ իւշ այ օլտու : Պիգիմ պու թէէհիւլիւմիւզին շու իլք զէմանլարընա պագաճագ օլուրսամ, կէօրիւյօրում քի Ալլահ պանա հարտըմ իթմիշ տիր : Գօճամը հէր բագար պէնիմէ պէրապէր պատարագա կէօթիւրէպիլտիմ : Պատարագ իշինտէ ուֆաճըգ պիր քարոզ վէրիւլէն պատարագը ինթիխապ իթտիմ, չիւնքի կէօրտիւմ քի պօճամ մէզհէպ խուսուսընտա զայէթ ճահիլ տիր :

Պու սապահ երլպաշընը թէպրիք իթտիյի վագըթ, պէնիմ իշին էն գիյատէ մագպուլ օլան հէտիյէնին նէ օլտուղընա տայիր պիր իյմատա պուլընտըմ : Քէնտինին ճանընը իսթէյօր օլտուղըմը անլատը : Գաչամագ եօլտա պիր ճէվապ վէրտի : Փագաթ հիշ զանն իթմէմ քի պանա պիր շէյ ըէտտ իթսին :

1879 Ապրիլ 15. — Նիհայէթ պիր չօգ էնտիշտէն, թէրէտտիւտտէն, տուատան սօնրա սսըլ մէսէլէյի քէնտիսինէ թէքլիֆ իթմէյէ գարար վէրտիմ : «Պու սէնէ Զատիկտէ Սրբութիւն ալաճագմըսըն», տէտիմ : Պունը օ գատար պիր նէզաքէթլէ սէօլլէտիմ քի արթըգ պանա եօգ տէմէյէճէք տիր, ֆիքրինտէ իտիմ . . . Պիր թէպէսսիւմիէ : «պու մէսէլէ տեղընըգ պանա այիտ պիր շէյ տիր : պու պիր

վիճառան մէսէլէսի նոր, սանա նէ» եօլընտա մուգամէլէտէ պուլընտը:

Եագըգ, ալտանտըմ, իւմիտիմ պօշա չըգտը: Պու ճէվապը ըէտտի պանա վէրմէսինէ նէ՝ սէպէպ օլապիլի Օլտուղընը պէյնուտէ եերէ տիւշիւնիւյօրտըմ: Աճէպա ինսանի սալընթըտա՞ն մը... տօսթլարընըն գօրգուսընտա՞ն մը... էլպէթ պիր կիւն անլալըլըր:

Ահ եա Բապպի նէ՝ գատար սրգըլըյօրտըմ: 1879 Մայիս 1.— Զանն իտէրսին քի արթըգ քէնտիսինտէն սրգըլըյօրտըմ: Բուհըմըն իւզէրինտէ ատէթա պիր սղըրըգ վար ըտը: Շիւպհէ իյէ գարարսըղըգ տալանըլըր շէյնէրտէն տէյիլ տիր: Շու հալտէ թէքրար ճէսարէթի էլէ ալարագ, տօղրուտան տօղրույա քէնտիսինէ սօրտու՞մ քի, «Նիյի՞ն բուհանի վազիֆէլէրինի իճրա էթմէյօրտըն»: Պանա ճէվապէն «Աէնին սաատէթինէ զըպթէ իտիյօրտըմ, սէն ինանըյօրտըն, հիչ պիր շէյին նօգսան տէյիլ տիր, հալպու քի պէնտէ իման եօգ տըր», տէտի:

Պու ճէվապ պէնի տէհչէթտէ պրագտը, սարարտըմ, սօլտու՞մ: Նէ՝ տէմէք տիր պու. իմանը եօգ իմիչ, տինինի զայպ իթմիչ... Աճէպա օնը թէքրար իմանա կէթիւմէք իչին նէ՝ եաքմալը տըր:

1887 Հոկտ. 13. — Իշթէ էվլէնտիյիմիգէ օն սէնէ օլմուշ տըր... պու կիւն թամմ օն սէնէ օլույօր: Եա Բապպի կիւնլէր նէ՝ չապուգ կէյիյօրլար:

Տիւնեա նաղարընտա պու օն սէնէլէր, սաատէթ սէնէլէրի զանն իտիյիյօր, պէնի կէօրէնլէր՝ «Պաթիյար տըր, հիչ պիր զայիլէսի եօգ տըր» տէյօրլար: Գալպիմին տէրինին կէօրմէյօրլար... պիր կիւն գօճանը տէճտէրիսին, տէյօրլարտը... Պու կիւն իսէ իքիմիպին բուհը արասընտա պէօյիւք ուշուրոււյար հասըլ օլմագտա տըր: Գօճա պիր Ֆիքիլիէր ալիմի վար տըր քի պէրապէր օրայա կիրմէլիգ, Կէօյլէր քէնտիսի իչին մէստուտ տըր, եէր իւզէրինտէ եալընըգ միւշթէրէքիգ...

Զէքտիյիմ շու իգթիրապը անլայապիլմէք իչին, եաշատըղըմ պու էօմրիւ եաշամագ լալըմ կէլիւր:

Մա մաֆիյի, եինէ գաթիի իւմիտ օլամամ: Պու սէնէ իլք էվլատըմըգ Ժագ իլք Հաղորդութիւնա հաղըրլանմագ իչին քրիստոնէական վարդապետութիւն տէրսինէ տէվամ իտէճէք տիր: Պէլքի պու քրիստոնէական... եա պու Հաղորդութիւն...:

Տայիմա տուա իտիյօրտըմ վէ իւմիտիմտէ տէվամ էյլէյօրտըմ:

1889 Յունիս 5.— Ժագ պու սապահ իլք Հաղորդութիւնընը ալտը, Պէն խորանա գատար օղլումա ըէֆագաթ իթտիմ, ֆագաթ պսպասը եէրինտէ օթուրմըշ գալտը... եալընըգ պէն կիթտիմ... էյ գալիմ եալընըգլըգ...:

Պէն քէնտիմ իչին սրգըլըյօրտըմ, ֆագաթ պու սուրէթլէ պապասընտան թէրք օլուսան Ժագ իչուն տահա զիյատէ միւթէէգզի օլույօրտըմ: Պիր կիւն պու չօճուգ պէօյիւյիւպ տէ քէնտի քէնտինէ տիւշիւնէճէք հալէ կէլէճէք օլուրսա, թապիի տիր քի, «մէզհէպ գարըլար իչուն տըր, օնլարա եարար, չիւնքի իշթէ պապամ տա օնա էհէմմիյէթ վէրմէյօր» տէյէճէք տիր: Պիր կիւն ինսանը քեամիլ օլտուղընտա պու չօճուգ տա պապասընըն եօլընը թուլթար տէյէ գօրգույօրտըմ:

Զանն իտէրսէմ վալիտէլիք գալպիմ իչուն պուստան տահա զիյատէ պիր քէտէր, տահա զիյատէ աճը օլամագ:

(Մապասի վար)

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ.

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՆԳԷՊ

(Եար.)

Այս տեսակ անձանց ձեռքը կամքի ազատութիւնը ի՞նչ կ'ըլլայ. գործիք մը, պատուակ մը մեղաց և չարութեան. հետեւաբար բարոյական կարգի ներդաշնակութիւնը խանգարելու պատճառ. Վասն զի մեղքը բարոյականութեան, բնական ու աստուածային օրինաց քանդումն է և առ հասարակ բարիէն շեղում մը: Ըսել է թէ կամքի ձգտումներու խոչնդակը, կապտումն է, ըսել է թէ ազատութեան ալ անձնասպանութիւնն է: Սաւուղ

որ իր սուրբին վրայ կ'իյնայ մեռնելու համար անձնաւորին, պատկեր մըն է այդ կարգի ազատականներու, Վասն զի մեղքը և առհասարակ չարութիւնը՝ կամքի ազատութիւնն է որ կը հարուածէ ուղղակի և կը հիւանդացնէ հրեմն մահու չափ. նա մտքէն կը սկսի, ինչպէս մարդկային ուրիշ ամէն գործ, կամքով ալ կը սպառի. եւս սեսաւ (ահա մտքի գործը) պտուղը, չինկաւ. հաւանեցաւ (ահա կամքինը) և մեղանչեց, թէեւ տեսնելով սկսաւ վտանգի մէջ դնել անմեղութիւնը. Այդ օրէն մարդուն կամքը փշալից մացառ մը դարձաւ, որուն մէջէն ամէն կրքի օձ կրնայ սողոսկիլ հրապուրելու անզգոյշ մարդը մարմնասիրութեան, ընչաքաղցութեան եւ փառասիրութեան խնձորին և անոնց յարակից ամէն մեղանչական առարկաներու տեսքովը ու ճաշակովը և ո՛ր քանինքն գոհ կ'երթան այս երեք կարգի մեղսունակ հրապոյններու, որոնց կրնայ վերածուիլ ամէն մեղք. Ձի ամենայն ուր ինչ յաւաքնի է՝ ցանկութիւն է մարմնոյ եւ ցանկութիւն աչաց եւ ամբարտաւանութիւն աստի կենացը (Ա. Յովն. Բ. 16). Ըսել է թէ մեղքը կորուստ է ազատութեան, անկարգ կրքի մը բռնութեան տակ. — Տեսէ՛ք հոն Փղշտացւոց արհաւիրքը՝ Սամսոն, առիւծներու բերան կը ճեղքէ իր անեղ ուժովը, մէկ իշուծնոտով հարիւրաւոր կը ջարդէ թշնամիներէ. երբ է որ իր հրաշալի ուժն ու կորովը կը կորսնցնէ. Ուրիշ անգամ ազատութիւնը մազի նմանցուցինք Արիստոյի դէպքին մէջ, որ ամէն մացառի կրնայ հանգուցուիլ՝ եթէ հերարձակ թողուի, հոս ալ ազատութեան մազն է որ հեշտութեան ձեռքը կը արուի. Սամսոն իր մազերու հրաշալի գաղտնիքը կուտայ գլխէ հանող կնոջ մը և սա միրատի մէկ հարուածով կը ջլատէ Սամսոնի ահաւոր զօրութիւնը, որ չի կրնար քանի մը Փղշտացւոց դէմ դնել և կ'իյնայ անոնց գերի՝ կորսնցնելով նոյն իսկ աչքի տեսութիւնը. Սոսկայի՝ բայց կենդանագիր պատկեր անոնց, որ կըրքերու կը յանձնուին մեղօք՝ կորսնցնելով ազատութիւն ու անոր հետ մտքի յստակ տեսութիւն. այս է հոգւոյ կուրացման վիճակը որու հետեւանքն է կորուստ:

Ըսածնիս լաւ եւս թափանցելու համար խորհրդածե՛նք քիչ մըն ալ թէ ի՞նչ է կիրքը. կիրքը զգացումի շարժումն է որ ուժգնութեամբ կը մղէ կամքը իր գործողութեան մէջ. Որ ըսել է թէ ո՛րքան սլ կրաւորակերպ է կրքի անունը, ըստ որում կրե՛լէն առաջ կու գայ, սակայն ներգործական է անոր դեմ կամեցողութեան մէջ՝ մնալով կրաւորաբար անոր հետեւանքը. Բայց այս չի նշանակեր որ անպատճառ կիրքը չար ըլլալու է. ընդհակառակը ինչպէս կամքն ու ազատութիւնը առ բարին են ի բնէ, նոյնպէս կիրքը դէպի բարին աւելի յօժարութեամբ շարժելու գրգիռն է. Բացատրե՛նք ըսածնիս հրեշտակային վարդապետի առաջնորդութեամբ. Մարդուս ախորժական մասին շարժումներուն մէջ բարին՝ ձգողական, իսկ չարին՝ վանիչ ուժ մը ունի. Ասոր համար բարին մեր ախորժական կարողութեան մէջ (կամքին մէջ) նախ և առաջ միտում մը կը պատճառէ, այնինքն յարմարութիւն մը կամ տեսակ մը համարձեցութիւն բարւոյն հետ. այս յարմարութիւնը կամ համարձեցութիւնը սիրոյ կիրքն է, որուն հակառակ շարժումը չարէն՝ անտեսութեան կիրքն է, որ խորշում է չարէն ի բնէ, և հետեւաբար գործակից սիրոյ. Չարին աւտեցումը, բարւոյն սէրը, երբ սակաւին ձեռք բերուած չէ բարին, մեր կամաց շարժումը կու տայ անոր ետեւէն ըլլալու՝ ստանալու համար, այս շարժումը բաղձանքի կամ ցանկութեան կիրքն է. ասոր հակառակ չարէն հեռացումը ու փախուստն է պժգանքի կիրքը. Բարիքը այսպէս ձեռք բերելէն վերջ մեր կամքը անոր մէջ կը հանդչի և այս հանդիսի և ուրախութեան կիրքն է. որուն ներհակն է չարին կողմէ ցաւ և տխրութիւն՝ եթէ բարին չստանալով չարիքի հանդիպի (Հմտ. Ս. Թվմ. 1—2. Խ. ԻԳ. Ե. 4). Կը տեսնուի ըսածնէս որ կիրքը անպատճառ մեղանչական չէ՝ այլ ընդհակառակը բարւոյ համար իղած է. Մանաւանդ միայն բարւոյ մէջ է որ ներգործական է, իսկ չարին գիրկը կրաւորական, որ ըսել է ուրիշ բառերով՝ մեր կամքի շարժումները որ կիրք կ'ըսուին, անոր ազատութիւնը կը ցայտեցնեն երբ առ

բարին են և ընդհակառակն անոր ազատութիւնը գերութիւն կ'ընեն, երբ առ չարն մղուած ըլլան: Բացատրենք աս ալ Ազոուի նացիոնը բերնով, որմէ աւելի հատու և յատակ ըլլալ կարելի չէ: «Կիրքը շարժում մի է... իսկ բարին, ըստ որում բարի է, չի կրնար ըլլալ եզր մը, ՈՐՄԷ հեռանայ այդ շարժումը: այլ ընդհակառակն եզր մը, ԱՌ ՈՐ ուղղուելու է նոյն շարժումը: Վասն զի ոչ մէկ բան բարիէն չի փախչիր, ըստ որում բարի, հապա ամեն բաներ զայն կը ցանկան ունենայ: Նմանապէս ոչ մէկ բան չի բաղձար զչարն, ըստ որում է չար, անոր հակառակ ամէն բան անկէ կը խորչի: այս պատճառաւ չարը չի կրնար ըլլալ ԵԶՐ, ԱՌ ՈՐ մղուին ու տարուին կրքերը, այլ է միայն ԵԶՐ, որմէ խոյս կաւ տան անոնք: Եւ այսպէս ունինք կրքերու հրկու դասակարգ, առաջին անոնց որ առ բարին կը տանին, ինչպէս են սէր, բաղձաւն, հանոյք, ուրախութիւն, որոնց աւելցնելու է յոյսն ու յանգստութիւնը: երկրորդ այն կրքերու՝ որ չարէն կը հեռացնեն ու կը զգուշացնեն, ինչպէս են. ատելութիւն, խորշում, արհամարհանք կամ պրծգանք, տխրութիւն, ցաւ, որոնց աւելցնելու է երկիւղ և յուսահատութիւն (Հմտ. Ս. Թովմաս 1—2 Խ. 23. յ. 2): Այս կէտին կ'արժէ առանձին նկատողութեան առնուլ այն բացատրութիւնը, որով Ս. Թովմաս նորբանորէն բարեոյն չուրջը կը ժողովէ յուսոյ, յանգստութեան, իրկիւղի և յուսահատութեան կրքերը, որպէս զի ամբողջական ըլլալ տեսութիւննիս և մութ տեղ չ'իմայ: Քարին երբ դժուարաւ կ'ընայ ձեռք բերուիլ և կամքի շարժումը զայն բաղձալով ու առ այն ձգուելով մէկտեղ զայն հեռու կը գտնէ իրմէ շատ մը խոչնդակներու պատճառաւ, բայց միշտ կարելի կը տեսնէ զայն, կը ստեղծէ ի մեկ յուսոյ կիրքը: իսկ երբ դժուարութիւնները անյաղթելի կ'ըլլան և անկարելի կ'ընեն բարեոյն ստացումը, կը յուզուի մեր մէջ յուսահատութեան կիրքը: Երբ մեր փափաքած բարեոյն հակառակ և առ այն երթալու ժամանակնիս կը հանդիպինք անոր ներհակ արին, զոր յաղթահարելը դժուարին ըլլայ,

կը ծնի մեր մէջ երկիւղի կիրքը թէ մի գուցէ տեղի տանք չարին և կորսնցնենք զբարին: Սակայն երբ չարի ներկայացուցած դժուարութեան հակառակ կը յաղթէ մեր կրկիւղին բարոյ տենչը, որով կ'որոշենք առաջութեամբ կոխել անպատճառ չարի խոչն ու խուրժը, կ'ունենանք յանգստութեան կիրքը, որ լաւ եւս արիաստութիւն կ'ըսուի (Հմտ. անդ):»

Երբ ըրինք մենք հետեւելով կրքերու այս շքեղ բացատրութեան, գտնուիք առաքինացուցինք բարեոյ մեր մէջ գրգռու և չարէն խորշումը նկատելով, ինչպէս են իրօք եթէ ուղիղ բանականութեամբ զեկալարուին: Անասնաբար անոնց գերութիւնը միայն կրնար իրաւունք տալ Ստոյիկեանց՝ նկատելու կիրքերը իբրեւ հիւսնադրութիւն մը, որ պարագային միայն կրնանք ըսել թէ կրքերը կրաւորական այլալուծութիւններ են կամքի և մտքի: հետեւաբար կրկնել կիկերոնի հետ թէ հիւսնադրութիւններ են և անոնցմով շարժողները հիւսնադ են մտքը, ուսումը և չունին ողջմտութիւն և կ'ըսուին անփափաք: Բայց երբ կամքը անձնիչիսան ուղիղ բանականութեան առաջնորդութեամբ վարէ կրքերը զէպի բարին հեռանալու համար չարէն, անոնք այլ եւս հոգեոյ այլալուծութիւններ չեն, հիւսնադութիւն չեն, այլ առաքինութիւն: Եւ այս իմաստով, կ'ըսէ Ս. Օգոստինոս. «Բրիստս ինքն չունենալով մեղք գործածեց կրքերը, երբ անոնց գործածութիւնը կարեւոր տեսաւ: այսպէս ցնծաց, տխրեցաւ, բարկացաւ, զայրացաւ և խապառ սիրեց:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՏԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՒՅ՝ ԳՐԲԷՆ

ԳՐԲԷՆ Ա. — Կ. Ժ. — Բարի կ'ընեալուի մը հրահանգացը վրայ:

(Շար.)

Իսկ երբ մեր վախճանն ուշանայ, համարեմք որ շաւ պատրաստուած չենք, ու զեռ անաւտան ենք այն-

ալի մեծ փառքի, որ պիտի յայտնուի ի մեզ՝ նախա-
առնամունքով ժամանակին. եւ աշխատեմք շու եւս
պատաստել զմեզ աշխատեալ յուրաքանչէր:

Երանի՜ եւ այն ծառային, կ'ըսէ աւետարանիցն
Դուկաս, զոր՝ երբ Տէրը գայ, արքուն կը գտնուի: Առա-
ջիւ կ'ըսենք մեզի, իր բոլոր ինքնաւոր վրայ պիտի կար-
գե զամբիկս:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար. եւ վերջ)

Երբ Ս. Սահակ Հայրապետն դարձաւ ամբողջ բա-
րեպաշտ ժողովաւոր անպատուած ուրախութեամբ
յեցուեցաւ, որովհետեւ թէպէտ Սուրբ իր առաջին
ի խոնարհութիւնը եւ պատիւը չունէր, բայց առաջնական
պէս կը քարոզէր եւ գրով ու խօսքով կը մխիթարէր
զամենքը: Եւստէ՛ք ասորին անուամբ մ'այն կաթողիկոս
էր. բուն եկեղեցիներուն պետքերուն հոգ տանողը Ս.
Սահակ Հայրապետն էր:

Նոյն ատենները, Ս. Սահակն դարձէր ասորի մը
յառաջ, այսինքն 431ին, Նեստորի գէտ գումարուե-
ցաւ Եփեսոսի Ս. Ժողովոյ: Յունաստան գտնուող մեր
թարգմանիչներէն ոմանք նոյն ժողովին՝ Վճիռը, յաւա-
րէն Աստուածաշունչի ընտիր օրինակ մը եւ ուրիշ ընտիր
մատեններ առնելով Հայաստան եկան այն միջոցին՝
որ Ս. Սահակ Պարսկաստանէն դառնալով Աշտիշատի
մէջ ժողով մը գումարէր էր իր հօտին բարեկարգու-
թեան համար: Կը երբ Յունաստանէն իրենց հետ քե-
րած գրքերը մի քանի երեւելի եպիսկոպոսներու նա-
մակներով ժողովական հարց մատուցին, ամենքն ալ
միասին ընդունեցան նոյն Ս. Ժողովին սահմանները,
եւ դատաւարեցին Նեստորի եւ անոր համախոհները:

Ս. Սահակ Կ Պապէն բերուած եօթանասնից ըն-
տիր օրինակին վրայէն նորէն թարգմանեց Ս Գիրքը:
Եւ այս ալ բաւական չհամարելով, իր աւակերտե-
րէն մէկ քանին, Ս. Մեսրոպայ խորհրդակցութեամբ,
Աղիքանդակաւ եւ Աթենք զրկեց. որպէս զի ամեն տե-
սակ ուսմանց համարալով՝ Ս. Գրոց եւ ուրիշ Ս. Հարց
գրքերուն թարգմանութեան պակասը յեցնեն:

Նոյն օրերը Նեստորի համախոհներէն ոմանք Հա-
յաստան բերին Նեստորի վարդապետ Թէոդորոս Սուր-
առեւասացուն եւ Թէոդորոսի վարդապետ Դիոգորոս
Տարսնացուն զիրքերը. որպէս զի հայերուն մէջ ալ խո-
րամակուրթեամբ սերմանէին Նեստորականաց վարդա-
պետութիւնը, ինչպէս սերմանեցին Ասորեստանի կող-
մէրը, ուր իրենց հետեւողները Նաստուրի կոչուեցան:
Բայց Սահակ եւ Մեսրոպ կանխաւ ուրիշ եպիսկոպոս-
ներէ տեղեկանալով այդ ազանց սուղներուն չարա-
ռեւատ հարկներուն, բացարձակապէս հերքեցին ա-
նոնց մոլորութիւնները ժողով գումարեցին եւ յիշեալ
Թէոդորոսի եւ Դիոգորոսի վարդապետութիւնը քննե-
լով դատաւարեցին եւ Հայրապետնէն վարեցին նոյ-
նին տարածողները: Եւ այս ամէնը գրով ծանուցին
Ս. Պրնզիւրի որ նոր նստած էր Կ. Պոլսոյ Պատրիարքա-

թեան Աթոռի Ան ալ գովելով հաստատեց Հայոց
բարեպաշտութեան նախնաւոր եւ անոնց գաւառութեան
համեմատ ինքն ալ թուղթ մը գրեց: Ս Սահակն եւ
իրեն հետը եղաքներուն աշտուրջ արթնութեամբ
Հայոց եկեղեցին ահարկու եղաւ ժամանակին բո-
լոր ազանգաւորաց, եւ գովելի հանդիսացաւ ամեն ե-
կեղեցիներու առջեւ: Ժամանակ մը վերջը, եկեղեցւոյ
հինգերորդ ընդհանուր ժողովին մէջ Հայոց առ. Պրնզի
ուղղած այս ուղղադատուն նամակը հերետիկոսաց
գէտ զիպողագոսն գէնք մը եղաւ:

Երբոր Դմոէ՛ք ասորին սուտանուն կաթողիկոսը
մեռաւ. նախորդները Ս. Սահակի քով ժողովելով
ներս մ'իյնդրեցին իրմէ եւ ազատեցին որ յանձն առնու-
ած առաջնական պէս վարել կաթողիկոսական իշխանու-
թիւնը, եւ միանգամայն նստացան յարգարար իր
թռներուն ստո նոյն իշխանութիւնը: Իսկ Ս. Սահակ
յայտնեց անոնց իր անխաղաք միաբն բնութիւնը. «Ես
իմ երկնաւոր վարդապետն սորված եմ, հայա-
ծողներս օրհնել եւ տաղներուս բարեք ընել. բայց Թի-
րանիք ժողովաւորի մը քահանայապետ չեմ կրնար
էլլալ: Գիտէ՛ք թէ ինչպէս կործանեցիք ձեր թագա-
ւորութիւնը եւ ոտնակոխ րրիք քահանայից գասա-
կարգը. ինչպէս կրնաք մխիթարել զիս հիմա՛յ երբ կը
տեսնեմ Հայոց աշխարհին վերահաս կորուստը: Արդ
թողէ՛ք որ ես ծերութեամբ օրերը անցրեմ տառնա-
նութեան մէջ, սգրալով հայրենիքիս աղէտները, զորս
Աստուած՝ եպիսկոպոս ձեռնադրուելէս առնօ՛ւրդէն
ցոյց տուած է ինձի: Ապա պատմեց անոնց իր սար-
կաւագոյն թեան տունն ունեցած տեսիլքը, յայտնելով
միանգամայն թէ թագաւորութեան հետ Լուսաւոր-
չի պարթեւական տան քահանայապետութիւնն ալ
պիտի վերջանայ:

Նախորդները այս ամէնը լսելով ամօթահար ե-
ղան, շատ զղջալին իրենց ըրածներուն վրայ եւ Սուր-
բին օրհնութիւնը առնելով արտաւճախաբար աղերսեցին
դարձան: Բայց մինչեւ Սուրբ Սահակն մահը ուրիշ
կաթողիկոս ղեկուռ չհամարձակեցան: Ս. Սահակ
թէեւ կաթողիկոսական ճոխութեան, պերճանքէ գուրկ
կեանք մը կ'անցընէր, բայց եկեղեցւոյ ամեն պետքե-
րը հայապետութեան սիրով կը հոգար:

Այն ատեն որ Պարսից Վաւաթ թագաւորը մե-
ռաւ եւ անոր տեղը թագաւորեց Յակոբա Ռ. քրիս-
տոնէից բուռն հալածիչը, եւ Հայրապետն մէջ խու-
ժութիւններ ծագեցան, Ս Սահակ, խոր ծերութեան
մէջ, Բագրեւանդ գաւառի Բյուր կոչուած գիւղը տ-
նանձնացաւ. ուր յի աւուրը եւ արդեամբ տու. Աստ-
ուած փոխեցաւ 440ին, նաւասարդ ամսուն վերջին
օրը (Սեպտ. 9), որ կը հանդիպէր իր ծննդեան օրուն,
հարիւր քսան տարուան հասակին մէջ, անմեաց յի-
շատակ մը թողով ամբողջ Հայրապետնի մէջ:

Սուրբին մարմինը մեծ պատուով տարին թագե-
ցին Աշտիշատ, որ իր սեփական կայսրածն էր: Գե-
րեզմանին վրայ հոյակապ եկեղեցի մը եւ անոր մօտը
կրօնաւորաց վանք մը շինեցին: Սուրբին տունը այն ա-
տենէն սկսեալ ամէն տարի կը կատարուի:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ

Ե Ի

ՄՅԵՐԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա .

Եթէ ճշմարիտ է թէ «ոճր մարդն իսկ է», հեղինակի մը առաւել կամ նուազ արժէքը՝ նկարագրի տեսակէտով՝ կրնայ ստէյլ ճանչցուիլ իր երկասիրութենէն։ Բարձր ոճ մը ընդհանրապէս բարձր հոգւոյ մը նշանն է, ուսմիկ ու անշնորհք ոճ մը՝ գոհիկ ու այլանպակ հոգւոյ։ Բայց կայ բան մը որ ոճէն անելի կը մատնէ մարդու բարոյական նկարագիրը . այն է իր գոտաստանը անձերու և իրերու նկատմամբ։ Վեհ ու բարեադակամ հոգի մը ձիւքեր ու առաւելութիւններ կը գտնէ հոն ուր ստորին ու չարեացակամ էակ մը թերութիւն և բիծ եւեթ կը նշմարէ։ Ոչ ոք այնչափ ներող ու քաղցր է իր գնահատումներուն մէջ որչափ սուրբերը, վասն զի ոչ ոք անոնց չափ բարձր է հոգիով եւ մտքատենչ սրտիւ։ Հասնազօրեայ փորձով գիտենք թէ մոլիները ամէն տեղ մոլութիւն կը գտնեն, մինչ աստօքինին կը հաւատայ թէ ամէնէն մոլիներն իսկ բոլորովին ծննման չեն աստօքնութիւնէ։ Այս մասին ֆիզիքական ու բարոյական աշխարհները միմեանց կը նմանին՝ զարմանալի կերպով . բուրումնաւէտ պարտէջի մը մէջ քաղցրասէր մեղուն կը թռչէ թռփէ թռփ, ծաղկէ ծաղիկ, աղտեղի ճանճը կը դիմէ իսկոյն ազրերու կոյտին . գեղազուարճ դաշտի մը մէջ գառնուկը կը խոյանայ դէպի մարգագետին ցօղաթուրմ, մինչ խոզը կը թաւալի ի տիղմ գարշահոտ ... Բանաստեղծը իրաւունք ունի երգելու՝

Բնութեան մէջ եւ այլուր աղսեղութեանց մի՛ փակչիր,

Տեսնելը քարին, գովելը գայն թող չըթրէի քեզ ոճիւր։

Նուաստութիւն, բարոյականի անկում կրնայ ամենուրեք պատահիլ անշուշտ . սակայն վերջին ժամանակներս կարծես մասնաւոր դիտում կը կայ ամէն ինչ նուաստացնելու, և գէպի վատն ու անարդը մղելու հայ ցեղին այն դասակարգերը մանաւանդ, որոնց

անբուական մշակումը մտքի զիրենք աւելի կ'ենթարկէ մոլորելու և ամէնէն ատելի նախապաշարմանց թշուառ գոհեր լինելու։

Ի՞նչ վսեմ տեսարան Ս . Եկեղեցւոյ մէջ, և որպիսի առատ հոնճք բարի ու մեծաւքանչ գործքերու։ Հարկ չէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը այցելել, կը բաւէ Հոռոմ կամ Խտալիան լոկ ճանչնալ՝ կաթողիկէ կրօնի աստուածային բեղմնաւորութեան վրա անկեղծօրէն դմայելու համար։ Ի՞նչ սէր, ի՞նչ եռանդ հոգիներու փրկութեան, ինչպիսի ազնիւ մրցում գիտութեան և ամենազգի զարգացման, ո՛րչափ խոնարհութիւն և համեստութիւն զուգընթաց գերապոյն ու անօթխտելի արժանեաց, որպիսի անսպառ ոգի գոհողութեան և անձուարացութեան, քանի՛ դիւցազնական սուսքինութիւնք միայն ի տես հրեշտակաց, որպիսի գերմարդկային մեծագործութիւնք և չնաշխարհիկ սրբութիւն «ցանկայի զուարթնոց»։ Դէմքեր և իրողութիւններ որոնք պիտի կրնային անթիւ գիւցազնեղութեանց նիւթ հայթայթել։ Բայց ի՞նչ կ'ընեն չարասէր էակներ, անճաշակ զրոգներ ու բանախօսներ . կը թողուն ինչ որ արժանի է գովեստի ու գնահատման, կամուսորապէս կը կուրցնեն իրենց աչքերը չտեսնելու համար ինչ որ կայ գեղեցիկ ու զրաւիչ, և վատշուէր հետաքրքրութեամբ կը փնտռեն, կը ժողվեն, կը ծանօթացնեն — և ի հարկին ստեղծելով իսկ — անհաճոյ ու անպատիւ գործքեր և զգուշի ու անպիտան դէմքեր։ Երկար տարիներ Խտալիա բնակելով իսկ հանդերձ, կը թողուն Հ . Սէքսիները, Վէնգուրաները, Ռոսսինիները, Փաֆասօսներն ու Տօն Պօդգոնները, և կը գրաւին ու կը զրաղեցնեն իրենց միամիտ ընթերցողները Տօն Բաշուրներով և ուրիշ աննշան կամ տիրահոշակ ողորմելիներով։ Գուցէ ըսէք ինձ . «De gustibus non est disputandum, ճատակներու վրայ վիճաբանութիւն չլիւր»։ Անշուշտ . ի՞նչ ամօթ սակայն անոնց որոնց ճաշակը ապականուել է այս աստիճան ...

Մամուլը որ պէտք էր ըլլայ լուսոյ եւ յառաջգիտութեան պորձիք մը, ընդհակառակն եղած է այսօր զրական չարագործներու ձեռք

քը ահուելի թոյն մը, մտաւոր, հոգեւոր և բարոյական երբեակ սպանութիւններ կատարելու համար:

Տօն Քաւուր տիտղոսով գրքոյկ մը որու վրայ ոչ իսկ իր անունը գրել համարձակած է նենգամիտ հեղինակը, անժխտելի ապուշոյց մըն է մեր դիտողութեանց: Ո՛չ մի ազնիւ գաղափար, ոչ մէկ ճշմարտութիւն, ոչ մէկ օգտակար գիտելիք կու գայ ձեզ ուսուցանել այդ ալտոտ գրուածը որ չափազանց կը նմանի իր հարապատ եղբօր՝ Պապ եւ Աւեսաւրանի, որու ջախջախիչ հերքումը հրատարակուեցաւ այս սիւնակներուն մէջ:

Ի՞նչ կ'ուզէ հասկցնել Քաւուրի անանունը — չըսելու համար — վատանուն հեղինակը: Թէ կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ անարժան պաշտօնեանի՛ր կան, թէ Հռոմի մէջ կարգուրաց կրօնաւորներ կրնան գտնուիլ, թէ ոմանք առ փոխանորդն Քրիստոսի յարգանաց և անկիղծութեան պակասութիւն կը գործեն: Բայց ո՞վ ըսաւ իրեն թէ Եկեղեցւոյ մէջ ամէն հպիսկոպո՞՛Ս. Փրանկիսկոս Սալէզեան, ամէն ժողովրդապետ երանելի Յ. Մ. Վիանէ և ամէն կրօնական երանաշնորհ Յովսէփ Բենեդիկտոս Գուրգուլէնկօ է: Ո՞վ ըսաւ իրեն թէ ամէն կարմեղեան Հայր Հերման, ամէն Դոմինիկեան Մանսալրէ, ամէն Յիսուսեան Կարլոս Անդոնիէօիլ, ամէն Բառնարասեան Շուփալօֆ և ամէն Վիգորաւոր (Փաբլուէն) Բէր Մարի Անթուան է: Ո՞վ ըսաւ իրեն թէ հին ու նոր աշխարհի բոլոր կաթողիկէ ըստուղները Ս. Պապին կը ներկայանան խորին երկիւղածութեամբ և կը խօսին կամ կը գրեն խղճի գիրագոյն փափկութեամբ ու անրիժ հաւատքով:

Շատ մը Հ. Փիլիպպոսներ, Հ. Անդրէասներ և Տօն Քաւուրներ կրնան շատ մը անկարգութիւններ գործել և կամ այլոց գործելու պատճառ ըլլալ, կրնան յիշուի կամ յանիշուի բողոքել իրենց մեծերուն դէմ, կրնան ուրիշներու խորհրդեանց զո՛հ ըլլալ, և կամ զայս զոհել իրենց դուրսուն և նենգութեանց: Բայց այս ամէնը ոչինչ կը փոխէ կրօնքի սկզբունքներէն, ոչինչ կը ջնջէ հեղեցական օրէնքներէն, ինչպէս նաև ոչինչ

կը յաւելու նոր՝ քսան դարերու պատմութեան վրայ:

Եթէ այսպիսի գայթակղութիւններով է որ պիտի հրահանպենք մեր ժողովուրդը, և եթէ Հռոմի անարժան աշակերտներու ոճիրներովն է որ պիտի կրթենք ու ողնուացնենք մեր հայրենեաց զաւակները, ի՞նչ հարկ կայ այդչափ հեռուները երթալ, օտար ու անծանօթ անուններու շուրջ թափառիլ, ու ուսուել կամ նուազ մթին ու անվաւեր իրողութեանց վրայ ելլել յօգուած ու գրքոյկ հրապարակ նետել: Միթէ մեզ այնչափ մօտ դէմքեր ու դէպքեր, անուններ և իրողութիւններ չառ աւելի ազդու չեն խօսիր, ու շատ աւելի պայծառ ուղադրոյ չեն բոլոր մարդկային անդամութեան, կեղծիքի, նենգութեան և ապերախտութեան:

Ահա ուրեմն միանգամ ընդ միշտ մեր պատասխանը Քաւուրի և նմանօրինակ իմաստակութեանց, գրական անպարկեշտութեանց, հեղինակին, հեղինակներուն ու մանսաւանց զայնս «ի գիր և ի բան» ներշնչող «բարձրաստիճան եկեղեցականին»¹, Միթէ ստոյգ չէ՞ որ Եկեղեցւոյ զաւակներ՝ իրենց տրուած դաստիարակութեան հակառակ՝ ամբարշտուներու գործակից կ'ըլլան նենգելու և կեղծեալ առեւտրաստութիւններ հրատարակելու: Միթէ ստոյգ չէ՞ որ առաջին դարերէն մինչեւ այսօր քրիստոնէութեան ամէնէն կատաղի թշնամիները իր ծոցէն ելած են և ստէպ իր անսահման բարիքը վայելած առ ոտս անձնուէր քահանայից: Ստոյգ չէ՞ որ ինքզինքնին կաթողիկէ հոգակող և առ Ս. Աթոռն ստորագրութեամբ հնազանդութիւն խոստացող անձինք չչառանալով խաժամութ ամբոխը գրգռել, կը ժախն նաև առտապելախառն գրքոյկներու պիւշուռն բոքուկանսս մը կազմակերպել ի Պոլիս և այլուր: Ստոյգ չէ՞ որ հաղար անգամ «մենք կրօնքի դէմ, հաւատոյ դէմ ու եւ է ղժուարութիւն չունինք, խնդիրը զուտ վարչական, մատակարարական է» գոչող պարոններ չեն շինիր այսօր՝ իրենց գրաւոր և բերանացի յայտա-

¹ Տօն Քաւուր էջ 4:

բարութեանց հակառակ՝ հաւատոյ ամէնէն փափուկ մասերուն դպչիլ . և կրօնքն ու ճշմարտութիւնը ծաղրելի բնելու նկրտիլ՝ ամէնէն ազատամիտներն իսկ զայրայնելու առտիճան :

Ո՛վ չգիտեր թէ մարդ կրնայ անհատապէս և ընտանեօք Հոռոմի շնորհները վայելիլ և յետոյ ծայրագոյն ապերախտութեամբ հատուցանել «չար փոխանակ բարւոյ» : Ո՛վ չգիտէր թէ մարդ կրնայ 20-25 տարի ամէն օր և օրուան մէջ մէկէ աւելի անգամներ սէր և հաւատարմութիւն խոստանալ Ս . Կուսին , Լիբանիա և վարդաբան զրուցել , և յետոյ յանդգնիլ հրեշտակաց Թադուհէոյն Վերափոխումն և Անարատ Յղութիւնն իսկ ուրանալ : Ո՛վ չգիտեր թէ մարդ կրնայ ի Հոռոմ փիլիսոփայութիւն , աստուածաբանութիւն և եկեղեցական իրաւաբանութիւն ուսանիլ , և յետոյ ելնել շուրջ կէս դար ոտնակոխ ընել տրամաբանութեան ամենէն տարրական կանոնները , հաւատոյ ամենէն հիմնական սկզբունքները և բարեկարգութեան ու վայելչութեան ամենէն անհրաժեշտ պահանջումները : Ո՛վ չգիտէր թէ մարդ կրնայ Պարոնիոսի և Ռորպաքէրի մէջ եկեղեցական պատմութիւն ուսանիլ , և յետոյ ժողով կոյր ազանդաւորներու հետ ոչ միայն ուրանալ կաթողիկէութեան հրաշալիքները , այլ եւ զըրպարանել զայն իւրեւ փաստակար մարդկութեան : Ո՛վ չգիտէր թէ մարդ կրնայ Հայր Աթանասներու , Հ . Գաթրճեաններու և Հ . Աւգէրներու վսեմ կոչումը ունենալ , և յետոյ Ռընաններու և Շառպոնէշներու հետեւիլ ի գայթակղութիւն բողոքաց : Ո՛վ չգիտեր թէ մարդ կրնայ հնազանդութիւն եւ աղքատութիւն ուխտել սրբատաշ խորաններուն առջեւ , ու յետոյ ապստամբիլ իր օրինաւոր մեծերուն դէմ , եւ հարստութիւն դիզել սովատանջ որբերու ողբին առջեւ քրքիչ բառնալով եւ յոգնաչարժար ժողովրդի մը աւրելնն ու արցունքը շահագործելով : Ո՛վ չը գիտեր թէ մարդ կրնայ Յաւիտենական քաղքին մէջ գլխաւոր Առաքելոց սրբոց Պետրոսի և Պողոսի շիրիմներուն վրայ քահանայ Բարձրելոյն օծուիլ կաթողիկէ հաւատոյ դաւա-

նութիւն տալով և Քրիստոսի փոխանորդներու աիեզերական ժողովները փառաբանելով և մէկ քանի տարի վերջ Ասիոյ մ.կ անկիւնը եպիսկոպոս ձեռնադրուիլ Ս . Պետրոսի գլխաւորութիւնը նշովելով և աիեզերական ժողովներու մեծ մասը խաբէութիւն հռչակելով : Ո՛վ չգիտեր թէ մարդ կրնայ Ս . Պապին անսխալութիւնը պաշտպանել հրապարակաւ եւ Ս . Աւետարանի վրայ երգում ընելով ընդունուիլ վարդապետ յաստաւածաբանութեան և ուխտել հաւատարմութիւն ուղղափառութեան , և յետոյ չտոկալ երդմնազանց եւ ուխտագրութ ըլլալով , կանգնիլ ջատագով հին ու նոր մոլորաթեանց , շուրջ կէս դար խօսքով ու գործքով մաքառիլ Քրիստոսի եկեղեցւոյն դէմ , արհամարհել դժոխքն ու սրքայութիւն , միլիոնաւոր հոգիներու յաւիտենական ճակատագրին հետ խաղալ անվրդով , խիլճ ու գլխութիւն առասպելներու կարգը դասել , Գերագոյն Էակին համբերութեամբ զեղծանիլ , զմարդիկ խաբել անզեղջ յամառութեամբ , և սրտապէս Բարձրելոյն անողոք արդարութիւնը հեգնել աներկիւղ . . . :

Աւասիկ , ո՛վ դժբախտ հեղինակ կամ մեղսակից Տօն Փառուրի , առաիկ թէ ի՞նչ հակասութիւններ , ի՞նչ արտասուելի անկումներ և որպիսի՝ խոտախրա եւ սրբապիղծ յանդգնութիւններ կարելի են այս աշխարհի մէջ , Խնչո՛ւ կ'ամբաստանէք Սկեղեցին եւ կը զանդաճէք մարդկային ազգի հայրագութ և բարձրագոյն իշխանութեան , գերագոյն Քահանայապետաց դէմ , Խնչո՛ւ պատասխանատուութիւնները կը տեղափոխէք , ի՞նչ բանի պիտի ծառայէ ձեր բանականութիւնը , կրք չէք պորձածեր զայն լաւ խորհելու և ուղղամիտ դասելու , Խնչո՛ւ պատասխանատու ըլլայ իր անարժան որդւոց սուտերուն և խաբէութեանց՝ Սկեղեցին որ անկեղծութիւն և ճշմարտութիւն եւեթ կը քարոզէ . Խնչո՛ւ պատասխանատու՝ անոնց անբարոյութեանց , նա՛ որ ամէնէն սրբաշունչ բարոյակոսն ու ամէնէն երկնաթիռ կատարելութիւնը կ'ուսուցանէ հանապաղ . Խնչո՛ւ պատասխանատու անոնց վարդապետութեանց , ուրացու-

թեանց, երդմնագրութ ուխտանենդ մասնութեանց՝ նա որ անմահ դպրոցն է յաւէտ պարտաճանաչութեան և հաւատարմութեան մինչեւ ի մահ: Պիտի պահանջէիք որ Եկեղեցին բառնայ ջնջէ այդ ազատութիւնը, ազատ որոշողութիւնը (libre arbitre), զոր երկինք պարգեւած է իր բանաւոր արարածներուն: Ինչ աւելի ծաղրելի ու անհեղեղ քան այսպիսի պահանջում մը: Սորվեցէք ուրեմն մի անգամ ընդ միշտ թէ Եկեղեցին պաշտօն ունի անսխալ ուսուցանելու, անխաբար պահելու հաւատոյ և բարոյականի աւանդը երկնապարզեւ, բայց պաշտօն չունի բնաւ մարդկային բնութիւնը փոխելու և Աստուծոյ գործերը սրբազրելու: Անիրաւունք, չէք ուզեր ճանչնալ իր ունեցած իշխանութիւնը և կը յամառիք խնդրել իրմէ այն՝ զոր չունի և չի կրնար ունենալ:

Զ. Ս. Յ.

19 Մարտ 1914

ԱՅԼԵԻ ԱՅԼՔ

ԱՆՀԱՒԱՏՆԵՐԷՆ ՇԱՏՈՐԸ՝ իրենց կաթողիկէ Եկեղեցւոյ ունեցած ատուութեան թշնամութեան հակառակ, յաճախ խոստովանած են անոր գերազանց առաւելութիւնները: Այս խոստովանութիւնները, որ զուտ արդիւնք են ակներեւ ճշմարտութեան անտեղիտակ ստիպման, կաթողիկէներու համար ամենայարմար դէպքեր մն ջախջախելու այժմու նորեկու անհաւատները: Ուստի օգտակար կը համարինք յիշել գլխաւոր անհաւատներու մի քանի այս կարգի խոստովանութիւնները:

— Եկեղեցւոյ իշխանութիւնը հրաշքով միայն կրնայ հաստատուած ըլլալ, եւ արդէն անոր գոյութիւնն իսկ հրաշք մըն է...: Եկեղեցին այն վիթխարի արձանն է զոր չկրցան դրդուել խոյի հարեւաւոր հարուածներ: Կը կարծե՞ս թէ մանր խիճ մը գետին պիտի տապալէ զայն: (Վ. լիթէ, Կարծես)

— Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, անոր հաստատարի վարդապետութեանց պատճառաւ, աւելի իմաստասիրական տարրեր, աւելի բարձր նկատողութեանց նիւթեր կը գտնուին, քան բողոքողութեան մէջ: (Հէկել, Լիմաս.)

— Ո՛հ, Եկեղեցին երբեք պիտի չստրկանայ: Ինչո՞ւ: Որովհետեւ Եկեղեցին բարձրագոյն դիրք մը ունի, աւելի հեռուէն կը տեսնէ. այժմ մեկ ակնարկով երկայն պատմութեան մը ընդարձակ մի-

ջոցը միանգամայն կը նկատէ, եւ դուն, ո՛վ աշխարհիկ կառավարութիւն, չտեսներու կառավարութիւն, կ'ուզես խորամանկութեամբ պատրել այսպիսի իշխանութիւն մը, յաւիտենական իշխանութիւն մը, որ աշխարհիս վրայ եւ հանդերձակին մէջ արդարութեան կշիռքը կը բռնէ: Ձեզի՛ կ'ըսեմ, չէք կրնար Պապը խաբել խորամանկութեամբ. աւելի լաւ է որ անմիջապէս տեղի տաք: Կրնաք ըլլալ, պիտի ըլլաք Եկեղեցւոյ կալանաւորը: Երբեք պիտի չկրնաք տիրել Օկեղեցւոյ: Նաբոլէոն Ֆոնդէնը պիտի մէջ բանտարկեց Պապը: Փոխարէնը ծանօթ է ձեզի: Ի՞նչ Նաբոլէոնէն ուժեղ չէք: (Գլեմանս, ճառ խորհրդարանական)

— Նայէ՛, ես չեմ կրնար քու կրօնական փաստարկութիւններուդ հետեւիլ... Հնար է որ ուրիշներու հոմար լաւ ըլլայ այդ, բայց ոչ ինձի համար: Ես պարտաւոր բանապաշտ մըն եմ, որ կը հպատակիմ Օկեղեցւոյ իշխանութեան իրողութիւնները գիտեմ, պատմութեան միջոցաւ կը տեսնեմ որ մարդկային կեանքին բարգաւաճման համար անտուածային եւ տեսանքի իշխանութիւն մը անհրաժեշտ կարեւոր է...: Արդ, ինչ որ Կաթողիկէ Եկեղեցին դուրս է, իշխանական շոխութենէ զուրկ է: Ուստի Կաթողիկէ Եկեղեցին է իմ փնտրած իշխանութիւնս, եւ անոր կը հպատակիմ, կը հաւատամ իր սորվեցուցածին, կը հաւատամ Հաւատամքին: (Սիւլվիո Թրեւը, Պատմ. Մարտի. ժամանակագիր)

— Ամէն բան կարելի է սպասել Պապէ մը, որ իր բոլոր կենաց մէջ ունեցել է սա նշանաբանը: Ես պատեմ կը կատարեմ, մնացածը Նախարարութիւնը կը հազայ: (Լէ Էլիսի Խարրիքէն 1900)

— Ամէն տեղ զառաւոր ընդունելութիւն կը տայ, բայց, կը խոստովանիմ որ պաշտօնական էր բոլորը: Միայն Վատիկանի մէջ հայրական շոգի մը տեսայ: Սարդ կը զգայ թէ այդ սրտին մէջ աստուածային բան մը կայ: (Սրաթր յաղագարը, 1906ին)

ՊԱՎԻՆՍԻ ԹԱԳԱՒԱՐԻՆ ԳԼԽԱՆ ԵԿԱԺ ԴԷԱԺ մը կը պատմէ Մօրկէն Կօսթ: Երբ Լուի Գ. Թագաւորը անցեալ օր առանց ուղեկիցի կ'անցնէր Միւնիխի փողոցներէն, իր դէմը ելաւ իր հպատակներէն մին, որ թագաւորը ճանչցած ըլլալով, կեցուց զայն: Մարդը չափազանց դարձեալ խմած ըլլալով գինովացած էր եւ առանց պատկառելու բռնեց թագաւորին օձիքէն եւ պահանջեց... որ սուրբերու մասին վիճաբանի իրեն հետ: Թագաւորը համբուրութեամբ մտիկ ըրաւ գինովին խօսքերուն, մինչեւ որ ոստիկանները իմանալով վազեցին եկան եւ Ն. Վեհափառութիւնը ազատեցին գինովին ձեռքէն: Թագաւորը հրամայեց ոստիկաններուն որ վրաս մը չհասցնեն անոր եւ թողուն որ իր ամբան շարունակէ:

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿՏԱԿ ՄԸ.—Թուրքական 65 տարեկան յայտնի ընկերակազմի գործիչ մը ինքզինքը կանխելով խեղդամահ եղեր է։ Այդ յուսահատական քայլը առնելէ առաջ սա երկտողը գրեթէ 30 անձնասպան կ'ըլլամ, որովհետեւ Հանրապետութենէն կը պարտւի ծակաւերկ մը գինի իւր ժառանգութիւն քաղաքին կը ձգեմ, եւ կը խնդրեմ որ զայն իմէք կենացը։

Լէնկիթիմի իր վրանին տակ տրտում տխուր նստած կը խորհէր իր ձախորդութիւններուն վրայ, եւ վնասութեան մատնուած կը տագնապէր։ Յանկարծ տեսաւ որ մըջիւն մը որմնի վեր կ'ըլլէր։ Կար ձգեց վայն շաք առնալ, բայց ան նորէն նորէն վեր ելաւ։ Ընթացեալ անգամ վարկաւ տապալեց վայն, ու խոսեալ անգամ դարձեալ ելաւ ան։ Լէնկիթիմի որ այն ատեն գոչեց։ Աստ' նմանիմ, եւ յառաջ ելաւ քանի պիտի յաղթեմ մենի ալ։

ԱՐՄԱՏԱԿԱՆ եւ արմատական-ընկերակազմի կուսակցութեան Պայտնի նախագահը, այս տարուան սկիզբները հրապարակաւ կը դառնաւ որ քաղաքական թաղումները շատ ցայտաւ էին նոյն քաղքին մէջ, եւ այս բանին դարման տանել կը խոստանար։ Հրաւիրեց ապա իր բարեկամները մասնաւոր ժողով մը, որ տեղի պիտի ունենար փետր. 22ին, առաւօտեան ժամը 10ին, եւ որուն մէջ իր նպատակին համար հարկ եղած միջոցները պիտի ճշդուէին։

Փետր. 22ըն առաւօտեան ժամը 10ին իր բարեկամները ժողովեցան ... քաղաքական թաղումով տարին շողուն յանձնեցին զինքը։

— Ո՞ր կ'ընդունուի այսչափ կանուխ — Պատասխալ կ'երթամ, հաղորդուելու համար։ — Ա՛յ, ես ամիսը անգամ մը կը հաղորդուիմ, եւ այնչափ բաւական կը համարեմ։ — Ըսել է թէ հաւատք չունիս — Ինչո՞ւ — Ի՞նչ է Հաղորդութիւնը — Այն սուրբ խորհուրդն է, որուն մէջ Յիսուս կը գտնուի ամբողջովին։ — Կը հաւատա՞ս ըսածիդ։ — Անտարակոյս... ատ ի՞նչ հարցում է։ — Ընդուն հաւատք ո՞նքս, բայց հաւատքդ մեծ չէ, այնչափ գործօն չէ որովհետեւ սէր չունիս։ — Իայց ես ալ քեզի պէս փրկիչը կը սիրեմ։ — Դու կը սիրե՞ս զինքը, ա՛յ, ո՛չ. եթէ սիրէիր աւելի սաեպ կը հաղորդուէիր։ Սրբ մէկը կը սիրենք չե՞սք ջանար իրեն աւելի մօտենալու... զինք ողջագործելու... որչափ կարելի է յաճախ... քու մօրդ նկատմամբ այսպէս չե՞ս վարուիր։ Արդ ինչո՞ւ չես փութար Յիսուսի դով որ կը հրաւրէ զքեզ ինչպէս զիս եւ բոլոր հաւատացեալները։ Ամենիդ ալ ինծի եկի՛ք կ'ըսէ՛ր։ Ուստի դու ամիսը մէկ անգամ միայն զինքը կը սիրես։ Ես կը ջանամ ամէն օր հաղորդուելու։ Գիտեմ որ այս բանն կ'ուրախացնէ Յիսուսը եւ ն-

կեղեցին... գիտեմ որ այս բանին պէտք ունիմ մաքուր մալու համար... եւ կը հաղորդուիմ նոյն իսկ եթէ անկէ ախորժ չլլաւ... Ի՞նչ կարծես, ես որ ամէն առտու մայրս ողջագործելու կը բաղձամ, կրնա՞մ չբաղձալ միանալու, Սուրբ Հաղորդութեամբ, Յիսուսի հետ, որ ինծի պարգեւած է մայրս, որ ինծի տուած է իր մայրը, Մարիամ կոյսը, որ ինծի կուտայ ինքզինքը եւ ինծի կը խոստանայ երկնից արքայութիւնը։

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Ս. Քաջառայապետը ունկնդրութեան ընդունեցաւ հարիւր թիւ տուն անգղիացի նաւաղներ, որոնք եկած էին Նէապոլոյ մօտերը գտնուող անգղիական նաւախմբակէն։ Ս. Սրբութիւնը նոյնպէս ունկնդրութիւն շնորհեց Ս. Վ. Պաւլոսեանի կաթողիկոսին ընդհանուր նախագահ գերակոմս Լըֆելին։

Սուլէանի մէջ տեղի ունեցաւ նոյն թեմին կաթողիկէ խմբակցութեան համագումար։ Ժողովը, որուն մասնակցեցան 4000է աւելի անձինք, Սրհ. Թուշէ Գերապայծառը կը նախագահէր։

Նախ Լիոնի փառատարաններու պետ և կաթողիկէ իրաւաբանական կաթալին կարգերէց Մ. Ժազիէ իսոնցաւ բացատրելով Սուլէանի եպիսկոպոսին նշանաբանը եղող սա երկու բառերը Յոյս եւ ջանք։ Յիշելով Ֆրանսոյի կաթողիկէներուն կրած անիրաւութիւնները, նեղութիւնները ըսաւ. «Վշտակութիւնը փրկութեան ճամբան է. ուստի սմբապէս յուսալու եւ լծէ մօտեցեր է փրկութիւնը... բայց յոյսը չի բաւեր պէտք է զայն արգասաւորել ընել ջանքով։ Հարկ է որ մենք մեզի օգնենք. եթէ կ'ուզենք օգնութիւն գտնել Աստուծմէ։

Մ. Ժազիէի սքանչելի ճառը ստեպ ստեպ ընդհատուեցաւ խանդավառ ծափերով։

Ապա խօսք առաւ Սուլէանի եպիսկոպոս Թուշէ Գերապայծառը, և իր հրաշալի ճարտարախօսութեամբ ցոյց տուաւ քրիստոնեայ սպաս դպրոցներու ուղղաթիւն օգուտները։

Ժողովը փակուեցաւ խանդավառօրէն բուռնութեամբ ընդունելով բանաձեւ մը որով կը պահանջէին որ աղքատ ուսանողաց համար սահմանուած պետական նպաստը բաշխուի հաւասարապէս լծէ պետական և լծէ քրիստոնեայ ուղատ դպրոցները յաճախող աղոյ։

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՆ. — Մարտ 29ին, Կերակի օրը, Արհ. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոմ քոսեան, Կ. Պատրիարքական Փոխանորդը փակեց հոգեւոր քարոզով մը Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյն մէջ տրուած ութ օրեայ կրթութիւնը։ Բողոքութիւն հաւատացեալներ ջերմեանդարէն հաղորդուեցան Ս. Խորհրդին։

• Այս շաբաթ, Մարտ 30է մինչև Մայիս 4, հոգեւոր կրթութիւն տեղի ունեցաւ Ս. Յովհան Ոսկերեան եկեղեցւոյն մէջ, որուն եւս ներկայ գտնուեցաւ երկսեռ ստուար բազմութիւն մը: Առաւօտները թուրքերէն լեզուով քարոզեց նոյն եկեղեցւոյն Մեծաւոր ժողովրդապետ Գեւրգ. Յովհաննէս խ. Մ. Վ. Կէտիկեան, իսկ իրիկունները՝ Գաղկեդոնի Ս. Լեւոն եկեղեցւոյն նորընտիր փոխ-ժողովրդապետ Գեր. Ներսէս Վ. Փափագեան:

ՆՆԻՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԿԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Կը հաւաստուի թէ կառավարութիւնն աւելի մեծ զարկ մը պիտի տայ բարենորոգմանց՝ փոխառութեան գումարը ստացուելուն պէս, որով չթմակուին պատրաստութիւնները կը տեսուին այս մասին: Անցեալները հրատարակուած մասնաւոր օրէնքով սահմանուած շրջանակներու քննիչները պիտի տեսուուին և իրենց չեղանարկներով իրենց պաշտօնատեղիները պիտի զրկուին: Արեւելեան Անատոլիոյ քննիչներուն անուանումն ալ այդ առթիւ պիտի ծանուցուի: Քննիչներուն աւալին պարտականութիւնը պիտի ըլլայ վարչական զանազան ծրագրին աւելի կանոնաւորելու և ժողովրդեան գործերը կարգադրելու մասին քննութիւն կատարելով առաջարկներ ներկայացնել կառավարութեան:

• Բարեկէն ձափառ պէյի կողմէ ձեռնհաս իշխանութեան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ մեծ փոխառութեան աւալին մասը՝ 500 միլիոն ֆր. յուսալի է որ Ապրիլ 20ին կամ 22ին հրապարակ հանուի, հարկերին Ծ-ԾՍ սակով: Առնուելիք գումարին տասը միլիոնը պիտի յատկացուի ցարդ ստացուած կանխավճարներուն հատուցմանը, իսկ չորս միլիոնը՝ Ֆրանսացիներու կողմէ արեւելեան նահանգներու մէջ շինուելիք երկաթուղիներու ծախքին: Մնացածն ալ պիտի սահմանուի Անատոլիոյ բարենորոգմանց ծախքերուն և ելմտացոյցին բացին: Ձափառ պէյ փոխառութեան պայմանագրութիւնը ստորագրուելուն պէս Կ. Պոլիս պիտի գայ:

• Կղզիներու խնդրը կարգադրելու համար Ռուսներու Բ. Իրան և Յունաստանի միջև միջնորդի դեր կը կատարէ: Ռուսներու միջնորդութեան առաջարկին առարկաներէն մէկն ալ է իսլամ փոքրամասնութեանց պաշտպանութիւնը Միտլիի և Քիոսի մէջ: Այդ պաշտպանութիւնը պիտի երաշխաւորուի թուրքեհ հէլէն վարչութեամբ մը: Ընդհ. ապահովութեան տեսակէտով թուրքիա և Յունաստան պիտի կազմեն ոստիկանները և ոստիկան զինուորները հաւասար թիւերով: Վարչութիւնը պիտի ըլլայ Սամոսիին նման՝ այսինքն Վարչական Խորհուրդի մը կողմէ, կազմուած քրիստոնէայ ու իսլամ անդամներէ՝ բնակիչներու թիւին համեմատութեամբ: Յայտնի չէ թէ Բ. Իռան ինչ պիտի պատասխանէ Ռուսներու այս առաջարկին:

— Ռուսներու Զոր. Բանակ, որուն համար կ'ըսուի թէ կղզիներու խնդրին կարգադրութեանը համար միջնորդի դերը կը կատարէ, Բ. Իրան մէջ տեսակցեցաւ քաղաքական գործերու տնօրէն Բէշեւ, պէյի և Եպարքոսին հետ:

• Յունաց Պատրիարքարանին և կառավարութեան միջև ծանօթ բողոքագրին առթիւ ծագած խնդիրը դեռ չլուծուեցաւ: Կառավարութիւնը հոստիսա կը մնայ իր այն յայտարարութեան վրայ՝ թէ Պատրիարքարանը իրաւունք չունի բողոք ներկայացնելու: Իսկ Պատրիարքարանը ասոր հակառակը կը պնդէ՝ ըսելով թէ. «Յունաց Պատրիարք. Աթինացի դէմ առաջ բերուած կացութեան մասին բողոքելովը կրթիւ Թուրքիոյ Յայրեան կրօնական պաշտ. երեսնաւունքը կը գործադրէ իր ազգայնացեալն ազգային ու մարդկային իրաւունքները պաշտպանելու մասին ազգաժողովին հաշմանքով ու Պետութեանը կողմէ, որոնք ուսած արարելութեամբ: Իւրաքանչիւր անհատ իր սահմանադրութենէն բխած այդ իրաւունքը գործադրելով կրնայ կառավարութեան մօտ բողոքել: Երբ Պատրիարքարանն աւելի վեճ իրաւարութեամբ ալ այդ իրաւունքը կը գործադրէ: Պատրիարք. Իր ունեցած Պետութիւն բերմամբ, Յունաց հաւատարմութեանը մասին պատասխանատու է Սուլթանին և կառավարութեան առջեւ, սակայն միւս կողմէ իրաւասութիւն ունի պահանջելու որ անոնք օրինաւոր կեանք մը վայելեն և զԺգհուրէի պատճառ մը չունենան»:

• Նոր Երեսփ. Ժողովը պիտի գումարուի Ապրիլ 14ին, կայսեր գահակալութեան տարեդարձին օրը:

• Իստական նախարարութիւնը ծանայց Յունաց Պատրիարքարանին թէ զինուորական ծառայութիւնը վերջ չպիտի մնայ անոնք որ զինուորակցին ծառայութեան տարիքը մանկէ ետքը կէկղեցական կը ձեռնադրուին:

• Հողային տուրքի յաւելման մասին հեռագիր օրէնքը հրատարակուեցաւ կայս. Իրաւեով վարչարացած:

Յօդուած Ա.— Հողային տուրքին իսկական քանակին վրայ հարկերն յիսուն աւելցաւ 1330 տարուան ելմտացոյցի բացին իբրեւ փոխարէն:

Յօդ. Բ.— Այս յաւելումը 1330 տարուան միայն պիտի պատկանի:

• Իւլանայի խնդրին առթիւ Նազիլի պատերազմական նախարար Կուդ. Ալլի, ինչպէս նաեւ ընդհ. սպայակոյտի պետ Սըր ձօն Թըրք. Զոր. Սըր ձ. Էնուրիթ վերջնապէս հրաժարեցան Վարչական Մր. Էնուրիթ պատերազմական նախարար տեսանկէցէն:

• Կը կարծուի թէ Վենետիկի վեհապետական տեսակցութեանց ամենէն գլխաւոր նպատը կըրնէ երբեք Զինակցութեան տերութիւններուն ընդացքը հանդէպ թուրքիոյ, որուն անվար պահանջները երբեք Զինակցութեան քաղաքականութեան գլխաւոր առարկան կը կազմէ:

•. Յրոնս. Երեսփ. Ժողովը 394 ձայնով ընդունեց մէկ անգամ ըլլալու պայմանաւ երկու միլիոն ժախսել ալք. պաշտպանութեան համար: Մասնաթուղթ մը այս ժախքերուն ինչպէս գործածուիլը պիտի հակակշռէ: Այս գումարը պիտի ստացուի գոյացեալ հարստութեան վրայ տուրք մը դնելով:

•. Ինքին գտնուող միսիոնարներէն եկած վերջին տեղեկութիւններու համաձայն, Չինաստանի մէջ թշնամական շարժում մը կը շեշտուի օտարներու դէմ: Նախագահ Երեսփ. Քայլ իմացուց եւ հանգստեան ներքին թէ զերենք պատասխանատու պիտի բռնէ գործուած ծայրահեղութիւններուն համար:

•. Մարտ 25ին Մայեանի մէջ վախճանեցաւ Ֆրետերիք Միսթալը, Ֆրանսայի գաւառական գերազանց բանաստեղծը:

•. Ռօշէթի գործին քննիչ յանձնաժողովին մէջ ընկերվարական անդամներն եւ առնել տուին այն որոշումը, որով Մ. Մ. Սօնիի ու Քայլայի գործած ազդեցութիւնը «Յաւալի դեղձում» կը նկատուէր: Մ. Փօռէս պատասխանեց, յանձնաժողովին նախագահու թենէն հրաժարելովը, որ մեծ գրգռութիւն առաջ բերաւ: Վերջապէս, արմատական — ընկերվարական մեծ ամասնութիւնը վերահաստատեց որոշումը, որով Մ. Փօռէս եւ առաւ իր հրաժարականը: Երեսփ. Ժողովին արտաքին արահներուն մէջ կ'ըսուի թէ արմատական-ընկերվարական մեծ ամասնութիւնը որոշում մը ընդունել պիտի տայ, Մ. Պառլեմէն արարքն ալ միեւնոյն կերպով քննադատելով:

— Ռօշէթի պահանջատերերը, որոնց թիւն 1,500ի կը հասնի, գումարում մը ունենալով Վարչական Խորհուրդ մը ընտրեցին որ պիտի աշխատի իրենց շահերը պաշտպանելու:

•. Երեսփ. Ժողովը, շարունակելով Իռլանդիայի ինքնորէնութեան ծրագրին վիճարանութիւնը, Արլիւ. կըտայ առաջարկեց բանակցութիւնները վերսկսել կառնկցապետներուն հետ Ըլաթերի խորհրդին նկատմամբ. հասկնալու համար թէ համաձայնութիւն մը կարելի չէ՞ վեց տարուան շրջանի մը համար դաշնակցական գրութիւն մը հաստատելու հիման վրայ:

Երեսփ. Ժողովին արտաքին արահներուն մէջ կը կարծուի թէ այդ հիման վրայ իրաւաբանական մը կարելի պիտի ըլլայ:

•. Ուլստերի կառավարութիւնը նկատի առնելով Սպիրիտի շարժման տարածումը, աստեղէն աւելը շահագրգռուող տէրութեանց դմեց, խորհրդով անոնց սխալմտութիւնը: Եւրոպայի կոբուր ընտացքը միայն պիտի կրայ լիքնօրէնութեան կուսակցութեան շահատակութեանց ստեղծ մը դնել: Իսպառական լրագրիները հաւանական չեն նկատուի տէրութեանց և կամ անոնցմէ մէկուն կողմէ անդակի միջամտութիւն մը Ալպանիոյ մասին:

•. Երեսփ. Համաձայնութիւնը և Երեսփ. Զրահակցութիւնը 1880էն մինչև 1910, այսինքն 30 տարուան ընթացքին, ծովային և ցամաքային սպառազորութեանց համար 104 միլիոն 800 միլիոն ֆրանք ծախսած են հետեւեալ կերպով: 1880—1890՝ 36 միլիոն 200 միլիոն ֆրանք, 1891—1900՝ 40 միլիոն 400 միլիոն ֆրանք և 1901—1910՝ 76 միլիոն 500 միլիոն ծախսուած է: Եւրոպական վերոյիշեալ խմբակցութիւնները խողաղութեան ժամանակ 4 միլիոն 816 հազար և պատերազմի տեսնել ալ 53 միլիոն 629,986 զօրք կը պահեն զէնքի տակ:

Վերոյիշեալ թիւերը շատ պերճախօս կերպով ցոյց կուտան ընդհանուր պատերազմի մը յառաջ բերելը ծանր վնասները:

•. Եւրոպայի աշտապահին կայսրանին մէջ անթեղ հեռաձայնական երաժշտահանութիւնը մը պատարուեցաւ: Իրիկուան ժամը 5-Սր աստիճանները կարելի եղաւ արդարեւ լսել—հապառակ սովորական հեռագրիներու փոխանակութեան դժուարութեան—թէնօռ մը, որ կ'երգէր Պրիւքսէի մօտ Լաէքէնի մէջ, իսկ լիւզն մօտ 300 քիլոմէթր հեռու: Այս յաջողութիւնը արդիւնքն է քանի մը շաբաթէ ի վեր Լաէքէնի անթեղ հեռաձայնական կայսրանին մէջ կատարուած փորձերուն, որոնք տեղի կ'ունենան վերջին իտալացի ճարտարագէտ Մ. Մարթին գաւած մանրամասն (միլիոն) միլիոնաւ: Ենտրչա Մ. Մարթին հնարած գործիքին վերջին օրերս կարելի եղած է Պրիւքսէէն 100 քիլոմէթր հեռաւորութեան վրայ լսել, Մարտիլէ և Պուպանսոս երգերը, որոնք կ'երգուէին ֆոնօգրաֆի մը միջոցաւ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	209
Պիւ կէնն զրգրն սեփերի խաբրարանան	218
Ազատութիւն	214
Եօթնեակ Բրիտանիի	216
Բարձրական անկում	218
Այլեւայլ	221
Տեղեկագրական	222

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻԿԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄԱԿՐԱՊԵՏ



ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԱԿՈՒՄԵԱՆ

Տպարան Կ. Անճաղանգ Շաքարաբերի, Բերա, Պայրամ փողոց քիւ 6, Կ. Պայրա

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արտաւաճ-
ման տար. Ֆր. 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ. — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Յօդուածներու 5. —
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ՝ ամենա-
յի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց՝ համար: Եւ տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, բարդ-տարէներ,
մահազդներ, եւն. եւն.: Գիրները անմեղելի կերպով աժան են: Գեղեցկագիտական՝ ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemysl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Pera et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Estompe d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accreditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.